«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ **Դասղեկի և դասավանդող ուսուցիչների աջակցությամբ ծնողների ակտիվ ներգրավվածությունը սովորողների առաջադիմության մակարդակի բարձրացման,կրթության որակի բարելավման և արժեքային համակարգի ձևավորման գործում միջին դպրոցում , մասնավորապես՝ 8-րդ դասարանում:**

Հետազոտող ուսուցիչ՝ **Անահիտ Օհանյան**

Ուսումնական հաստատությունը ՝ **<<Ակնալճի Ա.Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ**

Մենթոր ուսուցիչ՝ **Շուշան Վարդանյան**

ԱՐՄԱՎԻՐ- 2023

Բովանդակություն

Նախաբան	3
Գրականության ակնարկ	5
Գործնական համատեքստ	7
Հետազոտության ընթացքը	10
Տվյալների մշակում և վերլուծություն	14
Ամփոփում	16
Օգտագործված գրականություն	18

Նախաբան

Հանրակրթության համակարգի նորագույն մարտահրավերներից մեկն այն է, որ եթե նախկինում սովորողին պատրաստում էին որոշակի ապագայի, ապա այս ապագան շատ անորոշ է՝ պայմանավորված կյանքի արագընթաց փոփոխություններով:

Սերոբ Խաչատրյան

Այսօրվա դժվարին պայմաններում ընտանիքը դպրոցի համակարգված և որակյալ օգնության կարիքն ունի: Հարցումները հավաստում են, որ ծնողները զգում են դրա կարիքը և կարծես թե գիտակցում են, որ միայն ուսուցիչների հետ համագործակցելը կօգնի հաջողությամբ լուծել իրենց երեխաների կրթական խնդիրները և կապահովի նրանց համար բարենպաստ կրթական միջավայր: Երեխայի կրթական հաջողությունները դպրոցում մեծապես կախված են նաև նրանից, թե ծնողները որքան են կարողանում ժամանակ տրամադրել, օգնել , աջակցել երեխային, որքանով են տանը հարմարություններ և ընտանեկան նպաստավոր, ջերմ միջավայր ստեղծել նրանց ուսումնառության, ազատ ժամանակի կազմակերպման, հոգեկան ու ֆիզիկական առողջության պահպանման համար: Որքանով են կրթությունը, դաստիարակությունը, ուսումն ու գիտելիքը տվյալ ընտանիքում արժեք , որքանով է երեխայի մասնակցությունը և ձայնը լսելի ընտանիքում՝ իր կյանքին վերաբերող խնդիրների լուծմանն ու համապատասխան որոշումների ընդունման գործում: Որքանով են ծնողները գիտակցում , որ իրենց օրինակը երեխաների համար լռելյայն ընդօրինակման օբյեկտ է և իրենք ստիպված են նրանց ներկայությամբ սթափ և հավաքված լինել: Իհարկե, այս բոլոր հարցերում ընտանիքի առաջին և շատ դեպքերում միակ օգնականը ուսուցիչն է, ով կարող է ծնողին գիտելիքներ հաղորդել և օգնել՝ երեխաների համար ընտանեկան ջերմ մթնոլորտ ստեղծելու գործում: Համագործակցությունը միակողմանի չի լինում: Ծնողն էլ շատ հարցերում կարող է դպրոցին, ուսուցչին սատարել: Ավելին, ծնողներին կրթական միջավայրի ստեղծմանը ակտիվ մասնակից դարձնելը դպրոցի հիմնական խնդիրներից պետք է լինի:

Ծնողների գործունեությունը պետք է ուղղված լինի նրանց ակտիվ ներգրավմանը կրթական միջավայրի ստեղծման, արտադասարանական աշխատանքի և ազատ ժամանակի կազմակերպման, երեխաների և ուսուցիչների համագործակցության խորացման, երեխաների մասնագիտական կողմնորոշման և այլ հարցերում: Ծնողները պետք է համոզված լինեն, որ իրենց մասնակցությունը դպրոցական կյանքին կարևոր է ոչ թե այն պատճառով, որ ուսուցիչը դա է ցանկանում, այլ այն պատճառով, որ դա կարևոր է հենց երեխայի համար: Անշուշտ, այս դեպքում էլ ուսուցիչը պիտի կարողանա գտնել այն գործիքը, որը կապահովի տվյալ ծնողի մասնակցությունը դպրոցական կյանքին և կրթական միջավայրի ձևավորմանը:

Հետևաբար, ընտանիք-դպրոց, ուսուցիչ-ծնող-դասղեկ համագործակցությունն անխուսափելի է, դա արվում է հանուն երեխայի զարգացման և կայացման:

Հայ ժողովրդի համար ընտանիքը սրբություն է,ավանդույթների, սովորությունների , մշակույթի, դաստիարակության և այլ բազմաթիվ հատկանիշների կրողն ու փոխանցողը:

Այն երեխայի կյանքում հասարակական առաջին աստիճանն է և մեծ տեղ ու դեր է զբաղեցնում նրա դաստիարակման,կայացման հարցում:

Երեխային դաստիարակում է ամեն ինչ՝առարկաները,երևույթները, սակայն ամենից շատ մարդիկ և առաջին հերթին՝ ծնողները:

Ա.Ս. Մակարենկո

Եթե դպրոցն ու ծնողները հաջողությամբ համագործակցում են,ինչն իր հերթին հանդիսանում է սովորողի կրթվելու և զարգանալու վճռորոշ տարր,ապա հաղթանակն ապահովված է:

Հետազոտական աշխատանքիս նպատակն է նպաստել, զարգացնել և կատարելագործել ուսուցիչ-ծնող-դասղեկ փոխադարձ համագործակցության դրական ազդեցությունը սովորողի կրթության,զարգացման և դաստիարակության որակների բարձրացման վրա,ինչպես նաև ծնողների ուսուցման գործընթացին ներգրավվածության աստիճանի բարձրացմանը: Մեր օրերում տեխնիկայի զարգացման շնորհիվ առավել լայն ու բազմազան կարող է լինել ծնողի ներգարավվածությունը և մասնակցությունը սովորողի կրթության կազմակերպման և դաստիարակության գործընթացներում: Ուստի բոլոր ուսուցիչներիս նպատակն է զարգացնել և կատարելագործել դասղեկի,ուսուցչի ու սովորողի ծնողի միջև կրթության կազմակերպման,դաստիարակության, արտադասարանական միջոցառումներում ներգրավվածության, համագործակցության ձևերն ու որակները: Ուսուցիչ-ծնող-դասղեկ համագործակցության նպատակներն են.

գտնել ընտանիքում այն հնարավորությունները,որոնք դրական ազդեցություն կունենան սովորողի վրա,

բարձրացնել ծնողների մանկավարժական կուլտուրան,

ներգրավել ծնողներին ակտիվ մասնակցելու ուսումնադաստիարակչական աշխատանքներին:

Ծնողներին դպրոցական կյանքին մասնակից դարձնելը ունի շատ դժվարություններ ու խնդիրներ:Հետազոտական աշխատանքիս խնդիրն է ուսումնասիրել և բացահայտել դասղեկի և սովորողի ծնողի,դասղեկի և դասավանդող ուսուցիչների,սովորողի և դասավանդող ուսուցիչների փոխադարձ համագործակցության ընթացքում առաջացող դժվարությունները, առաջարկել նոր լուծումներ, որովհետ ծնողների գերակշիռ մասը ,,հեռացել է,, իր որոշակի պարտականություններից և ստանձնել միայն դիտորդի դերը: Շատ ճկուն ու հմուտ պետք է լինի մանկավարժը, որպեսզի կարողանա ծնողին դարձնել իր խորհրդատուն, համախոհը և գործընկերը:

Գրականության ակնարկ

Ընտանիքում արմատներ են գցվում, որոնցից հետո
աճում են ճյուղեր, ծաղիկներ և պտուղներ…

Վ.Ա.Սուխոմլինսկի

Բոլորիս է հայտնի, որ տարիներ շարունակ երեխայի կրթության ու դաստիարակության գործում առաջնային ու կարևոր դերը տրվում էր ուսուցչին և ուսումնական հաստատությանը՝ անտեսելով ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի դերն ու մասնակցությունն այդ գործում:Դա, իհարկե ,իր խորքային բացատրություններն ունի:

Այժմ երեխայի հետ փոխգործակցության լավագույն մոդելն ուղղված է անձին ու անհատականությանը: Իսկ անհատականությունը, ինչպես գիտենք, ձևավորվում է ընտանիքում, քանի որ հենց ընտանեկան միջավայրում է երեխան անցկացնում իր օրվա գերակշիռ մասը: Երեխայի դաստիարակությունը հարկավոր է սկսել ծնվելուն պես, դեռևս օրորոցում: Ավելին՝ սխալված չենք լինի, եթե նշենք, որ երեխայի դաստիարակությունը պետք է սկսել դեռևս սաղմնային վիճակում:

Մարդու մանկությունից հիմք դրված սկզբունքները նման են մատղաշ ծառի կեղևին փորագրված տառերին, որոնք աճում են, ծավալվում նրա հետ, կազմում նրա անբաժան մասը:

Վ. Հյուգո

Հետևապես դաստիարակության մեջ կարևորը նրա ճիշտ սկիզբն է: Սխալ դաստիարակությունը միշտ արատներ է ծնում: Ինչպես ասում են՝ ավելի հեշտ է մարդուն դաստիարակելը և գրեթե անհնար՝ վերադաստիարակելը: Երեխայի ձևավորման գործում մեծ դեր են խաղում թե՛ ժառանգականությունը, թե դաստիարակությունն ու ընտանիքի վառ օրինակը, ծնողների ազդեցությունը: Սակայն սա չի նշանակում, որ ուսուցիչն ու ուսումնական հաստատությունը չեն կարող ունենալ իրենց ազդեցությունը աշակերտի անձի ձևավորման գործում: Ծնողի ցանած սերմերը կարող են և՛ արմատախիլ լինել դպրոցական միջավայրում, և՛ բողբոջել ու ծլարձակել, նայած, թե ինչպիսին են դրանք:Հենց այս պատճառով պետք է սերտ կապ ու համագործակցություն լինի ուսուցիչների և ծնողների (կամ նրանց օրինական ներկայացուցիչների) միջև:

Դպրոցում ուսուցիչը սովորեցնում և դաստիարակում է, իսկ ծնողները ապրելով երեխայի հետ, հաղորդակից լինելով բազմաթիվ կենսապայմաններում՝ երեխաների վրա ներգործելու ավելի լայն հնարավորություն ունեն: Ընտանեկան դաստիարակության հաջողությունն ապահովող առաջին պայմանը համերաշխ ընտանիքի առկայությունն է: Ընտանիքում լավ փոխհարաբերությունների, առողջ մթնոլորտի առկայության դեպքում աճում են հանգիստ, հավասարակշռված, եռանդուն ու կենսուրախ մարդիկ: Երեխայի դաստիարակության հարցում մեծ նշանակություն ունեն ծնողների փոխհարաբերությունները երեխաների հետ: Դա բարդ հարց է, որի լուծման ժամանակ առաջնակարգ նշանակություն է ստանում խստության և քնքշության չափը: Չի կարելի անընդհատ սիրել երեխային, անընդհատ գովասանքի արժանացնել, խրախուսել, կատարել նրա բոլոր պահանջները կամ ընդհակառակը, երեխային

անընդհատ պարսավանքի ենթարկել, պատժել և այն: Դրանք բոլորը պետք է լինեն չափավորված ու դուրս չգան անհրաժեշտության սահմաններից:

Ծնողների սերը կույր չպետք է լինի: Երես տված և փափկասուն երեխաները, որոնց ամեն մի քմահաճույք կատարվում է ծնողների կողմից, մեծանում է այլասերված, թուլամորթ, եսամոլ:

Ֆ.Է.Դերժինսկի

Շատ ծնողներ, քաջ գիտակցելով երեխայի դաստիարակության ժամանակ իրենց դերը, երբեմն մոռանում են ուսուցման ընթացքում անհրաժեշտ դերի մասին, կամ կարծում են, որ երեխայի ուսուցումը պարտավոր է իրականացնել միայն դպրոցը: Իրականում երեխայի հիմնավոր գիտելքների ձեռքբերման նպատակով անհրաժեշտ է պահպանել ընտանիք-դպրոց համաձայնեցված փոխհարաբերությունները: Միայն այդ համագործակցության արդյունքում է հնարավոր կուտակել երեխայի կայուն գիտելիքների առավելագույն պաշար:

Դա նպատակաուղղված, երկարատև ու համառ աշխատանք է, որն իրականացվում է՝ հաշվի առնելով մարդկային բարձր հատկանիշներն ու որակները և, անշուշտ, էթիկայի նորմերը:

Երեխայի ուսուցման և դաստիարակության իրականացման ընթացքում պետք է ուշադրությամբ հետևել մի շարք կանոնների.

1. Հաշվի առնել երեխայի կարծիքը և հարգել նրան որպես անհատականություն,
2. Հետևել երեխայի դասապատրատման ընթացքին՝ խրախուսելով նրան, յուրաքանչյուր չնչին հաջողության դեպքում,
3. Ստեղծել դասապատրաստման համար հարմարավետ պայմաններ՝ այն հաճելի զբաղմունք դարձնելու նպատակով,
4. Պարբերաբար զրուցել և համոզիչ պատասխանել երեխայի ցանկացած հարցին
5. Անդրադառնալ երեխայի խնդիրներին և աշխատել լուծում տալ դրանց
6. Հետևողական լինել այն հաղորդումներին (ֆիլմեր, երաժշտություն, ճանաչողական հաղորդումներ և այլն), որոնք երեխաները դիտում են հեռուստատեսությամբ,առավել ևս արդի ժամանակաշրջանում գլոբալ խնդիր համարվող հեռախոսներով ու համակարգչով
7. Հետ պահել երեխային ավելորդ ագրեսիայից և լարվածությունից, սահմանափակել համակարգչով կամ հեռախոսով զբաղվելու երեխայի անցկացրած ժամանակը,եթե այն չի նպաստում երեխայի ,,առողջ,, զարգացմանը
8. Հետևել տնից դուրս երեխայի շփումներին
9. Հետևել երեխայի գրական և կիրթ խոսքին:

Դարեր շարունակ երեխաների դաստիարակությունն իրականացվել է ընտանիքում և ուսումնական հաստություններում:

Ընտանեկան դաստիարակության առնչությամբ հանդես եկան 3 հիմնական ուղղություններ.

1. Պեստալոցին էր, ով տունը համարում էր բնական դաստիարակության հիմք, գտնում էր, որ մարդկանց ընտանեկան հարաբերությունն առավել բնական հարաբերություններն են և դաստիարակությունը նույնպես, սակայն նա չէր ժխտում ուսումնական հաստատությունների

դերը:

2. Անգլիացի սոցիալիստ Ռոբերտ Օունն էր, ով ընտանիքը համարում էր էգոիզմի և երեսպաշտության բույն, բացասական կարծիք ուներ ընտանեական դաստիարակության մասին:Նա կողմ էր դաստիարակության պետական համակարգին,որի միջոցով բոլոր երեխաները կստանան միատեսակ կրթություն և դաստիարակություն և այն կարծիքին էր,որ դա կարելի է ստանալ միայն պետական,հասարակական ուսումնական հաստատությունների ընձեռած հնարավորություններով:

3. Նոր ժամանակների մեծ մտածողները, մանկավարժներն ու հոգեբանները գտնում են, որ երեխաների դաստիարակությունն իրականացվում է դպրոցի, ընտանիքի, հասարակության համատեղ ջանքերով: Ընտանիքի ազդեցությունն երեխաների զարգացման և ձևավորման վրա ունի անփոխարինելի ուժ, որովհետև յուրաքանչյուր խելամիտ ծնող լավ է ճանաչում իր երեխային: Երեխայի ընտանեկան դաստիարակության համար ամուր հիմքը ծնողների սերն է:

Գործնական համատեքստ

Տվյալ հետազոտության համար հիմք է հանդիսացել կյանքի՝ մարտահրավերներով լի ժամանակահատվածում սովորողի կրթական կարիքների ապահովման շրջանակներում ծնող-դասղեկ-ուսուցիչ հաստատուն կապի անհրաժեշտությունը, որը կարող է մեծ ազդեցություն ունենալ սովորողի ուսումնադաստիարակչական գործընթացի որակի բարձրացման վրա: Երբ ծնողը արդյունավետ ներգրավվածություն ունի իր երեխայի կրթության գործընթացում,երեխան ավելի բարձր ակադեմիական առաջադիմություն է գրանցում և ավելի արժևորված է զգում իրեն: Դասարաններում սովորողների մեծ քանակով պայմանավորված և հետևաբար ժամանակի սղության պատճառով հնարավոր չի լինում անհրաժեշտ ուշադրություն դարձնել, բավարար ժամանակ տրամադրել յուրաքանչյուր սովորողի գիտելիքների լիարժեք ստուգմանը՝ անկախ նրա առաջադիմությունից, ակտիվությունից և այլնից: Այս պարագայում առաջնային է դառնում ուսուցիչ-ծնող-դասղեկ փոխհամագործակցությունը՝ միասնական ուժերով բացասական տարաբնույթ երևույթները արմատախիլ անելու և գոնե դրական անհրաժեշտ նվազագույնը սերմանելու նպատակով:

Հետազոտության նպատակն է

1. Սերտ համագործակցություն ապահովել դպրոցի և սովորողի ծնողի միջև:
2. Հնարավորինս ներգրավել ծնողներին իրենց երեխաների ուսումնադաստիարակչական գործընթացում դպրոցի կազմակերպած դասարանական և արտադասարանական միջոցառումներին:
3. Նպաստավոր պայմաններ ստեղծել աշակերտների սոցիալական զարգացման, դաստիարակության և կրթության համար:
4. Ցույց տալ ուսման և դաստիարակության ընթացքում ուսուցչի և ծնողների կողմից երեխաների տարիքային առանձնահատկությունների հաշվառման կարևորությունը:
5. Ներկայացնել ծնող-դասղեկ-ուսուցիչ արդյունավետ համագործակցության դրական ազդեցությունը սովորողի ուսումնադաստիարակչական գործընթացում:

6. Ներկայացնել ծնող-դասղեկ-ուսուցիչ արդյունավետ համագործակցության դրական ազդեցությունը սովորողի կրթական որակի բարձրացմանը

Հետազոտության խնդիրն է

1. Ինչպե՞ս ներգրավել ծնողներին աշակերտների ուսումնադաստիարակչական խնդիրների լուծման պրոցեսին,կրթական որակի բարձրացմանը:
2. Ինչպե՞ս ներգրավել ծնողներին իրենց երեխաների ուսմանը և դաստիարակությանը վերաբերող հարցերի մասին ընդհանուր որոշումներ կայացնելու գործին:

Հետազոտության վարկած և հարցեր

Ենթադրվում է, որ միայն դպրոց-ընտանիք սերտ կապի և համագործակցության շնորհիվ կարելի է հասնել ուսումնադաստիարակչական գործընթացում առաջ քաշած նպատակներին:

Ի՞նչ չափով է ծնողների ներգրավվածությունն ազդում աշակերտների առաջադիմության վրա:

Ծնողների հետ փոխգործունեությունը դպրոցի և յուրաքանչյուր ուսուցչի աշխատանքում հրատապ և բարդ խնդիրներից է: Ընտանիքները շատ տարբեր են, յուրաքանչյուրն ունի իր խնդիրներն ու դժվարություններն, ուստի հնարավոր չէ պատրաստի և միակ ճիշտ պատասխանը տալ այն հարցին,թե ինչպես շփվել ընտանիքի հետ:

Շատ բան կախված է ուսուցչի հմտությունից, ինտուիցիայից, ով պետք է վերլուծի տարբեր հանգամանքների համալիրը, որեպսզի ճիշտ որոշում կայացնի որոշակի իրավիճակում ծնողների և սովորողի հետ շփվելու մեթոդների և միջոցների ընտրության հարցում: Ծնող-ուսուցիչ-դասղեկ կապի պահպանումը ուսումնական գործընթացում աշակերտի հաջողության բանալին է, իսկ ծնողների և դպրոցի միջև կապի բացակայությունը, ինչպես նաև դպրոցի ու ծնողների չհամաձայնեցված գործողությունները վնասում են երեխայի կրթությանն ու դաստիարակությանը:

Ծնողների և ընտանիքների ներգրավումը ապահովելու համար ուսուցիչը պետք է՝

1. Դիտի ծնողներին որպես գործընկերներ
2. Կանոնավոր կերպով հաղորդակցվի նրանց հետ
3. Ներգրավի ծրագրերի մասնակցությանը
4. Նպաստի տնային պայմաններում ուսման զարգացմանը
5. Աջակցի ընտանիքներին ռեսուրսներից և ծառայություններից օգտվելու հարցում:

Արդյունքում սովորողը միշտ կլինի ուշադրության կենտրոնում, կլինի կառավարելի:

,,Ծնողների ներգրավվածություն,, տերմինը նշանակում է միասնական և անընդմեջ պատասխանատվություն աշակերտի հաջողութոյունների և ուսման բարելավմանը, ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Երբ ծնողը ներգրավված է իր երեխայի կրթության գործընթացում, սովորողն ունի ավելի բարձր առաջադիմություն, այդ նույն ժամանակ բարելավվում է հաճախման ցուցանիշը, սովորողի մոտ զարգանում է սոցիալական շատ կարևոր հմտություններ և նրա վարքը դրական է դառնում, ինչպես տանը, այնպես էլ դպրոցում:

Ծնող-դպրոց կապը ավելի կամրապնդվի, եթե հաճախակի հրավիրվեն ծնողական ժողովներ, հանդիպումներ, խորհրդատվություններ, տարբեր հետաքրքրաշարժ միջոցառումներ: Այդ

կապը ևս ավելի կզարգացնենք, եթե օգտագործենք ժամանակակից տեխնոլոգիաներ: Ժամանակակից տեխնոլոգիաները `համակարգիչ, հեռախոս, հնարավոր են դարձնում քննարկումները կատարել հեռավար: Տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս երեխայի կրթական կարիքների և ուսման առաջադիմության կամ կարգապահական խնդիրների մասին տեղեկանալ ավելի շուտ:Հետազոտական աշխատանքիս իրագործման համար օգտագործել եմ հաղորդակցման բոլոր հնարավոր տարբերակները ` առկա հանդիպումներ,ժամանակակից տեխնոլոգիաների միջոցով հաղորդակցումը և ծնողների ,և դասարանում դասավանդող ուսուցիչների հետ:

Դիտարկումներն ու ուսումնասիրությունները ցույց են տվել, որ տարրական դասարաններում ծնողներն ավելի են ներգրավված ուսումնական գործընթացին, հաճախակի ինքնակամ այցելում են դպրոց, դպրոց-ծնող -ուսուցիչ կապն ավելի ամրապնդված է, քան միջին և բարձր դպրոցներում: Հաշվի առնելով 7-9 դասարաններում սովորողների տարիքային առանձնահատկությունները և այն հանգամանքը, որ հիմնականում այդ տարիքում են երեխաները թեքվում դեպի ,,անառողջ աշխարհ,,` ձեռք բերելով ճակատագրական վատ սովորություններ , լինելով 8-րդ դասարանի դասղեկ, ես ինքս փորձեցի կոնկերտ իմ դասարանի սովորողների ծնողների հետ ավելի սերտ կապ ստեղծել: Նշեմ, որ տվյալ դասարանում դասղեկական աշխատանքը ստանձնել եմ դեռևս 5-րդ դասարանից, ու կատարում եմ այդ պարտականությունները առ այսօր: Բացի այդ, դասարանում դասվանդում եմ նաև մաթեմատիկա առարկան:Դասարանի ծնողներն ի սկզբանե դրական վերաբերմունք ունեն դպրոցի և դասարանի ներքին կանոնադրությանը և դրանով իսկ իմ աշխատանքը բավականին հեշտանում է: Բացի դասարանի դասղեկի դաստիարակչական աշխատանքներում ներառված դասղեկական ժամերի և ծնողական ժողովների,մշտապես անցկացվել են հանդիպումներ, խորհրդատվություններ և այլ միջոցառումներ՝ ծնողների հետ ավելի սերտ կապ հաստատելու նպատակով: Կազմակերպվել են կոլեկտիվ դիտումներ՝ ներկայացումներ,կինոներ,ճանաչողական էքսկուրսիաներ Հայաստանի տարբեր գեղատեսիլ և պատմական վայրեր,այցելություններ դեպի թանգարաններ, պատկերասրահներ, զվարճանքի վայրեր, որտեղ ներգրավված էին ծնողները, ինչպես կազմակերպչական հարցերում, այնպես էլ մասնակցության առումով: Այս ամենն ավելի մտերմացրեց աշակերտներին ծնողների և դասղեկի հետ:

Վստահ կարող եմ նշել, որ սովորողների աշխարհընկալման վրա դրական է ազդել կատարված բոլոր աշխատանքները:Սակայն միշտ թերի է մնացել առարկայական գիտելիքների իմացությունը սովորողների շրջանում:

Որպես դասղեկ, իմ ողջ գործունեության ընթացքում աշխատել եմ սովորողների ուսումնառության առաջադիմության մակարդակը ըստ ընդունակությունների և կարողությունների բարձրացնելու ուղղությամբ,ընտրելով ամենատարբեր մեթոդները՝ծնողական ժողովներ,աշակերտական ժողովներ ,առանձին ծնողների և առանձին սովորողների հետ անհատական աշխատանք,դասարանում դասավանդող ուսուցիչների հետ խորհրդակցություններ և խորհրդատվություններ առանձին-առանձին դիտարկելով

յուրաքանչյուր սովորողի անհատականությունը,սակայն՝ անարդյունք: Տարեցտարի նվազում էր աշակերտների առաջադիմության ցուցանիշները:Իսկ դա իմ աշխատանքային գործունեության ընթացքում ամենահուզող հարցերից մեկն էր,որը ձգվում էր տարիներով,իմ ամենամեծ մտահոգությունը:

Հետազոտության ընթացք

Այս ուսումնական տարվա սկզբին,սեպտեմբերի 6-ին անցկացված ծնողական ժողովի ընթացքում խնդրեցի ծնողներին օգնեն ուսուցիչներիս ՝ օգնենք իրենց:Այսինքն՝ ստանձնեն ծնողի պարտականությունները ամբողջությամբ,մանավանդ այն ,ինչը սահմանված է ՀՀ հանրակրթության մասին օրենքով,որն է

1) երեխայի համար ընտանիքում ապահովել համապատասխան պայմաններ կրթություն ստանալու համար.

2) մշտապես հոգալ երեխայի ֆիզիկական առողջության և հոգեկան վիճակի մասին, ստեղծել համապատասխան պայմաններ երեխայի հակումների և ընդունակությունների զարգացման, կրթական կարիքների բավարարման համար.

3) հարգել երեխայի արժանապատվությունը, դաստիարակել աշխատասիրություն, բարություն, ընկերասիրություն, հանդուրժողականություն, գթասրտություն, հարգալից վերաբերմունք ընտանիքի, մեծահասակների, պետական և մայրենի լեզվի, ժողովրդական ավանդույթների և սովորույթների նկատմամբ.

4) դաստիարակել հարգանք ազգային, պատմական, մշակութային արժեքների և հայրենիքի նկատմամբ, հոգատար վերաբերմունք պատմամշակութային հարստության և շրջակա միջավայրի նկատմամբ, հանդուրժողական վերաբերմունք այլ ժողովուրդների և մշակույթների նկատմամբ.

5) դաստիարակել հարգանք ուսումնական հաստատության և մանկավարժական աշխատողների նկատմամբ.

6) սույն օրենքի 15-րդ և 16-րդ հոդվածներով սահմանված ժամկետներում երեխային բերել ուսումնական հաստատություն.

7) հատուցել իր, ինչպես նաև իր երեխայի կողմից ուսումնական հաստատությանը հասցված վնասը.

8) սովորողին զերծ պահել ծխախոտ, ոգելից խմիչքներ, հոգեմետ նյութեր, զենք, զինամթերք, թունավոր, պայթուցիկ, ինչպես նաև օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ արգելված այլ նյութեր օգտագործելուց,

որպեսզի դպրոցը լիարժեքորեն կատարի իր առաքելությունը սովորողների համար:

Ծնողի կամ օրինական ներկայացուցչի պարտականությունները ընթերցումով վերհիշեցնելուց հետո առաջարկեցի ծնողներին ամեն օր,երեկոյան ժամերին գտնել 10-15 րոպե ազատ ժամանակ և ստուգել երեխայի դասապատրաստումը հաջորդ օրվա դասացուցակով,կատարել նշումներ ստուգման արդյունքների մասին,դրանք հավաքագրել

շաբաթվա ընթացքում ,ներկայացնել ինձ ուրբաթ օրը ,մինչև աշխատանքային օրվա ավարտը, որպես ծնողի կողմից շաբաթական կատարված աշխատանքի հաշվետվություն:

Ու այսպես յուրաքանչյուր շաբաթ,մինչև մեկ ամիս տևողությամբ:

Դասարանում կա 21 սովորող,որից 2-ը ներառված են (թույլ մտավոր կարողություն) :

Աշխատանքները սկսել ենք սեպտեմբերի 11-ից:

Այդ ընթացքում, յուրաքանչյուր շաբաթվա յուրաքանչյուր օրվա առավոտյան,առաջին դասաժամից 10-15ր առաջ իմ կողմից պատահականության սկզբունքով ստուգվել է որևէ 1 կամ 2 սովորողի դասապատրաստում տվյալ օրվա դասացուցակով:Արդյունքների մասին գրառումներս կատարել եմ ըստ շաբաթների և դրանք համեմատել ծնողների կողմից ներկայացված հաշվետվությունների հետ,զրույցներ եմ ունեցել դասարանում դասավանդող ուսուցիչների հետ կամ հարցումներ եմ արել նրանց, սովորողների պատրաստվածության մասին:

Ամենօրյա ստուգումների արդյունքները օրվա ընթացքում տեղադրել եմ հեռավար հարթակի դասարանի էջում,որում ներառված են բոլոր սովորողները,ծնողները և դասավանդող ուսուցիչները, որպեսզի հնարավորինս պահպանվի ծնողների կողմից կատարված աշխատանքների ստույգությունը,տրված տեղեկությունները լինեն հուսալի:Նույն նպատակը հետապնդելով՝եղել են դեպքեր,երբ նույն սովորողի դասապատրաստումը շաբաթվա ընթացքում իմ կողմից ստուգվել է 2 կամ ավելի անգամ:

Պարբերաբար աշխատանք եմ տարել դասարանում դասավանդող ուսուցիների հետ,որպեսզի յուրաքանչյուր ուրբաթ օրը ,մինչև աշխատանքային օրվա ավարտը ,ներկայացնեն հաշվետվություն շաբաթվա ընթացքում իրենց դասավանդած առարկայից սովորողների մոտ նկատված փոփոխություններ մասին՝չհիմնավորված պատասխաններից խուսափելու համար:

Առաջին շաբաթվա (սեպտեմբերի 11-15-ը) ավարտին ստացված տվյալները և հիասթափեցնող էին,և մեկ անգամ ևս համոզվեցի, որ կրթության որակի բարձրացման համար, որպես հիմնախնդրի լուծման առաջնահերթ քայլ,պետք է համառ աշխատանք տանել ծնողների հետ:

Առարկաները	Իմ ստուգումների քանակը /սովորող/					Ստուգող ծնողների քանակը				
	1-ին օր	**2-րդ օր**	**3-րդ օր**	**4-րդ օր**	**5-րդ օր**	**1-ին օր**	**2-րդ օր**	**3-րդ օր**	**4-րդ օր**	**5-րդ օր**
Հայոց լեզու		1		2			**6**		**8**	
Գրականություն	2		1		2	**5**		**8**		**8**
Ռուսաց լեզու	2	1	1		2	**5**	**6**	**8**		**8**
Ֆրանսերեն	2		1			**5**		**8**		
Անգլերեն		1	1				**6**	**8**		
Հայոց պատմություն					2					**8**
Համաշխարհ. պատմ.				2					**8**	
Հայ եկ. պատմ.		1					**6**			
Հասարակագիտություն				2					**8**	
Հանրահաշիվ	2		1		2	**5**		**8**		**8**
Երկրաչափություն		1		2			**6**		**8**	

Ինֆորմատիկա					2					**8**
Ֆիզիկա	2		1			**5**		**8**		
Քիմիա			1		2			**8**		**8**
Կենսաբանություն		1		2			**6**		**8**	
Աշխարհագրություն	2			2		**5**			**8**	
ՆԶՊ					2					**8**

Երկրորդ շաբաթվա (սեպտեմբերի 18-22-ը) ավարտին ստացել եմ հուսադրող պատասխաններ:Ծնողների մեծամասնությունը շաբաթվա ավարտին ներկայացրեցին հաշվետվություններ:Երբ առաջին շաբաթվա ավարտին դասարանում դասավանդող ուսուցիչներից գրեթե դրական արձագանք չկար,երկրորդին արդեն ուսուցիչները սկսեցին խոսել սովորողների պատրաստվածության մակարդակի փոփոխության մասին:: Վերջապես ,,սայլը տեղից շարժվեց,,:

Առարկաները	Իմ ստուգումների քանակը /սովորող/					Ստուգող ծնողների քանակը				
	1-ին օր	**2-րդ օր**	**3-րդ օր**	**4-րդ օր**	**5-րդ օր**	**1-ին օր**	**2-րդ օր**	**3-րդ օր**	**4-րդ օր**	**5-րդ օր**
Հայոց լեզու		2		2			**13**		**14**	
Գրականություն	2		2		2	**14**		**15**		**15**
Ռուսաց լեզու	2	2	2		2	**14**	**13**	**15**		**15**
Ֆրանսերեն	2		2			**14**		**15**		
Անգլերեն		2	2				**13**	**15**		
Հայոց պատմություն					2					**15**
Համաշխարհ. պատմ.				2					**14**	
Հայ եկ. պատմ.		2					**13**			
Հասարակագիտություն				2					**14**	
Հանրահաշիվ	2		2		2	**14**		**15**		**15**
Երկրաչափություն		2		2			**13**		**14**	
Ինֆորմատիկա					2					**15**
Ֆիզիկա	2		2			**14**		**15**		
Քիմիա			2		2			**15**		**15**
Կենսաբանություն		2		2			**13**		**14**	
Աշխարհագրություն	2			2		**14**			**14**	
ՆԶՊ					2					**15**

Երրորդ շաբաթվա (սեպտեմբերի 25-29-ը) ավարտին ստացված պատկերը լրիվ փոխվել էր: Անգամ ներառված սովորողներից Բ. Քրիստինեի մայրն էր սկսել հետևել իր երեխայի ամենօրյա աշխատանքին:Հ. Նարեկը տատիկի խնամակալության տակ է,այդ իսկ պատճառով նրա հետ կապված բոլոր աշխատանքները կազմակերպվում է դպրոցում՝ուսուցչի օգնականի և հոգեբանի աջակցությամբ:

Առարկաները	Իմ ստուգումների քանակը /սովորող/					Ստուգող ծնողների քանակը				
	1-ին օր	**2-րդ օր**	**3-րդ օր**	**4-րդ օր**	**5-րդ օր**	**1-ին օր**	**2-րդ օր**	**3-րդ օր**	**4-րդ օր**	**5-րդ օր**
Հայոց լեզու		2		2			**19**		**19**	
Գրականություն	2		2		2	**17**		**20**		**18**
Ռուսաց լեզու	2	2	2		2	**17**	**19**	**20**		**18**
Ֆրանսերեն	2		2			**17**		**20**		
Անգլերեն		2	2				**19**	**20**		
Հայոց պատմություն					2					**18**
Համաշխարհ. պատմ.				2					**19**	
Հայ եկ. պատմ.		2					**19**			
Հասարակագիտություն				2					**19**	
Հանրահաշիվ	2		2		2	**17**		**20**		**18**
Երկրաչափություն		2		2			**19**		**19**	
Ինֆորմատիկա					2					**18**
Ֆիզիկա	2		2			**17**		**20**		
Քիմիա			2		2			**20**		**18**
Կենսաբանություն		2		2			**19**		**19**	
Աշխարհագրություն	2			2		**17**			**19**	
ՆԶՊ					2					**18**

Չորրորդ շաբաթվա (հոկտեմբերի 2-6-ը) ավարտին ստացված տվյալները ամբողջովին բավարար էր ասելու,որ մեր աշխատանքը արդյունք տվել է,ես հասել եմ իմ հետազոտության նպատակներից կարևորագույններից մեկին:

Առարկաները	Իմ ստուգումների քանակը /սովորող/					Ստուգող ծնողների քանակը				
	1-ին օր	**2-րդ օր**	**3-րդ օր**	**4-րդ օր**	**5-րդ օր**	**1-ին օր**	**2-րդ օր**	**3-րդ օր**	**4-րդ օր**	**5-րդ օր**
Հայոց լեզու		2		2			**19**		**20**	
Գրականություն	2		2		2	**19**		**18**		**19**
Ռուսաց լեզու	2	2	2		2	**19**	**19**	**18**		**19**
Ֆրանսերեն	2		2			**19**		**18**		
Անգլերեն		2	2				**19**	**18**		
Հայոց պատմություն					2					**19**
Համաշխարհ. պատմ.				2					**20**	
Հայ եկ. պատմ.		2					**19**			
Հասարակագիտություն				2					**20**	
Հանրահաշիվ	2		2		2	**19**		**20**		**19**
Երկրաչափություն		2		2			**19**		**20**	
Ինֆորմատիկա					2					**19**
Ֆիզիկա	2		2			**19**		**20**		
Քիմիա			2		2			**20**		**19**
Կենսաբանություն		2		2			**19**		**20**	
Աշխարհագրություն	2			2		**19**			**20**	
ՆԶՊ					2					**19**

Տվյալների մշակում և վերլուծություն

Հետազոտության ընթացքը ցույց տվեց,որ նպատակային և հետևողական աշխատանքի ավարտին արդյունքը շոշափելի է:Տարիներ ի վեր ինձ միշտ անհանգստացրել է դպրոցականների և առհասարակ՝ տարբեր ուսումնական հաստատություններում սովորողների մեծամասնության գիտելիքների ձեռք բերման նկատմամբ տարեցտարի անկումը,ուսման նկատմամբ չհիմնավորված անտարբերությունը: Շատերս ենք լսել, որ ,,դարը փոխվել է,,: Սակայն ես միշտ չէ և ամեն հարցում չէ,որ համաձայնել եմ այդ խոսքերին, քանի-որ ,,դարը,, մեր կամքով է ,,փոխվել,, ,մեր շնորհիվ,մեր աջակցությամբ,մարդկանց միջև ստեղծված արհեստական և ոչ տեղին ,ոչ էլ նպատակ հետապնդող մրցավազքից:

Եթե կարողանաս մարդկանց խումբը մոբիլիզացնել մեկ նպատակի համար,ապա դրական արդյունքը անխուսափելի է: Այս ՝ գրեթե մեկ ամիս կատարված հետազոտությունս արձանագրեց աննախադեպ և անսպասելի արդյունք:

Առաջին շաբաթվա ընթացքում ծնողները չէին սպասում ,որ համառորեն կփորձեմ իրագործել ծնողական ժողովի որոշումը իրենց իսկ մասնակցությամբ:Նկատվեց պասիվ աշխատանք ծնողների կողմից:Այդ շաբաթվա ուրբաթ օրը ,երբ դասարանի հեռավար հարթակում հայտնվեցին պարտաճանաչ և պատասխանատվության զգացումով օժտված ծնողների հաշվետվությունները կատարած աշխատանքի վերաբերյալ , իմ անձնական էջին նամակներ ուղարկեցին այն ծնողները, ովքեր թերացել են իրենց հանձնարարված աշխատանքում,խոստանալով ,որ հաջորդ շաբաթվանից կկատարեն ծնողական ժողովում կայացրած որոշումը՝ երեխաների դասապատրաստումը ստուգելը և շաբաթական հաշվետվություններ ներկայացնելը:

Հասկանալի է, որ ծնողները մասնագետներ չեն և չեն կարող լիարժեք ստուգել բոլոր առարկաների դասապատրաստումները և բոլոր երեխաները օժտված չեն նույն ընդունակություններով:Կարևորը ,որ յուրաքանչյուրը փորձում էր աշխատել իր ընդունակություններին համապատասխան,փորձելով գոհացնել և ծնողին,և ինձ, և դասավանդող ուսուցչին:

Ինչ խոսք,որ մեր բոլորիս՝դասղեկ-ծնող- ուսուցիչ ջանքերով սպասված արդյունքը ստանալը հեշտ չէր,մանավանդ սկզբնական փուլում,ինչպես նաև շատ աշխատատար էր:Սակայն ,երբ ամեն ինչ ընկել է հունի մեջ,ապա հետագա աշխատանքները կլինեն ավելի հեշտ կառավարելի և ծնողի,և իմ՝որպես դասղեկի,և դասարանում դասավանդող ուսուցիչների կողմից:Անընդհատ վերահսկելով տարվող աշխատանքները,կգա մի պահ,երբ սովորողները իրենք հաշվետու կլինեն իրենց գիտելիքների ձեռքբերման մակարդակի համար,ճիշտ կգնահատեն և կարժևորեն իրենց ձեռքբերումները՝ ըստ ընդունակությունների ու կարողությունների:

Ոգևորված էին և աշակերտները՝ իրենց առաջադիմության արդյունքներից,և ուսուցիչները , իսկ ծնողների մասին խոսելն ավելնորդ է:Դրա վկայությունն է ծնողների կողմից երախտագիտության խոսքերը ՝ուղղված ինձ,ուսուցիչներին ,դպրոցին:

Շնորհակալական խոսքերի արժանացանք տնօրինության կողմից և կոչ արվեց բոլոր դասարանների դասղեկներին ու դասավանդող ուսուցիչներին, մեր փորձը,որի արդյունքը

ստացվեց համընդհանուր համագործակցությամբ և մշտադիտարկումներով, կիրառելու մյուս դասարաններում ևս:

Փորձեմ ընդհանուր ներկայացնել հետազոտության ընթացքը և վերջնական արդյունքը .



- Իմ ստուգումները ՝ ըստ շաբաթների
- Ծնողների ստուգումները ՝ ըստ շաբաթների
- Ուսուցիչների դրական արձագանքը ՝ ըստ շաբաթների

Ամփոփում

Այպիսով, ելնելով մեր դպրոցի 8-րդ դասարանում իրականացրած ծնող-դասղեկ-ուսուցիչ համագործակցությունից, վերանայելով արդյունքները , կատարեցինք դիտարկումներ:

Համագործակցությունը հաջողված էր և դրական ազդեցություն ունեցավ սովորողների անհատականության և կրթական ուսումնառության որակի բարելավման վրա:

Ուսուցչի , դասղեկի և սովորողի ծնողի համագործակցությունը բավականին պատասխանատու և կարևոր գործընթաց է: Կողմերը պետք է քաջ գիտակցեն, որ իրենց համագործակցության հիմքում կրթության առաջնային շահերի՝ սովորողների սովորելու իրավունքի իրականացումն է: Եվ միայնակ գործելը հնարավոր և ցանկալի արդյունք չի ապահովի:

Կողմերի համագործակցությունը պետք է հիմնված լինի մարդկային բարձր ու բարոյական որակների վրա:Այստեղ չի կարելի ստորադասել որևէ կողմի գործառույթները: Հարկավոր է մշտական,ամենօրյա կապ պահել ծնողների հետ, որպեսզի հնարավոր լինի մշտադիտարկել կրթական հնարավոր խնդիրներն ու սովորողների վարքային շեղումները , գտնել միասնական լուծման տարբերակներ: Հարկավոր է մյուս դասարաններում կամ գոնե զուգահեռ դասարաններում սովորողների ծնողների մեջ ևս ստեղծել բարոյահոգեբանական կայուն ու առողջ միջավայր, հետևողական աշխատանք՝ սովորողների ուսումնառության որակի բարելավմանը ուղղորդված ,որպեսզի հնարավոր լինի միջավայրի դրական փոփոխություն ,որը դրական կանդրադառնա սովորողների անհատականության դրսևորումների վրա:

Կարևոր հանգամանք է նաև մանկավարժական խորհրդատվությունը ծնողին: Ուսուցիչն իր նեղ մասնագիտական գիտելիքներով ու փորձառությամբ ցանակալի է, որ կիսվի ծնողների հետ,իսկ ծնողը ուսուցչին ժամանակին տեղեկացնի երեխայի հետ կապված հուզող հարցերի մասին: Պարտադիր է հաշվի առնել սովորողի անհատականությունը:Չի կարող լինել ընդհանուր խորհուրդ սովորողին կրթելու համար, քանի որ յուրաքանչյուր մարդու կարիք ունի իր մոտեցումը և ազդեցության մեթոդները , չնայած տարիքային օրինաչափությունները գործնականում նույնն են բոլորի համար:Կարևոր է, որ կարողանանք նոր վստահելի հարաբերություններ կառուցել սովորողների հետ: Նորերը ոչ թե այն պատճառով, որ հաղորդակցությունը խզված է, այլ այն պատճառով, որ փոխազդեցությունն ու հաղորդակցությունը տեղափոխվում են այլ մակարդակ:

Կարևոր պայման է փոխադարձ հարգանքն ու այն գիտակցումը , որ կողմերի արդյունավետ աշխատանքն ուղիղ համեմատական է արժեքային համակարգ ունեցող, դաստիարակված ու գիտակից անձնավորության ձևավորմանը: . Մենք պետք է փորձենք ծնողներին վստահություն ներշնչել,որ որակյալ ուսուցիչները կսովորեցնեն և կկրթեն իրենց որդուն կամ դստերը , և որ դրա համար պատրաստ են բոլոր անհրաժեշտ պայմանները:

Մնում է յուրաքանչյուրը ստանձնի իր իրական պարտականությունները և դա կատարի գիտակցաբար,ըմբռնումով,պատվով:Հետազոտության արդյունքներից ելնելով՝ կարող եմ ասել , որ ծնողներին մասնակից անելով իրենց երեխաների դասապատրաստման աշխատանքներին՝պարբերաբար տանը վերահսկելով նրանց կատարողականը,իմ կողմից կատարելով ամենօրյա ստուգումներ սովորողների շրջանում օրվա դասացուցակային դասերի պատրաստվածությանը, ամենօրյա քննարկումները դասարանում դասավանդող ուսուցիչների հետ սովորողների պատրաստվածության մասին , նպաստել են սովորողների առաջադիմության մակարդակի բարձրացմանը: Սովորողները դարձել են բավականին ինքնավստահ,սիրով են գնում կաբինետից-կաբինետ,կատարում են օրվա դասերի թեմաների շուրջ ակտիվ քննարկումներ,չեն խուսափում դաս պատասխանելուց,դարձել են ավելի կարգապահ,ավելի պատասխանատու հանձնարարված աշխատանքի նկատմամբ,օգնում են միմյանց: Անգամ դասերից բացակայող աշակերտները ծնողների,դասընկերների և դասավանդող ուսուցիչների օգնությամբ շատ արագ լրացնում են բաց թողածը: Կարծում եմ,այսուհետ նույն հետևողականությամբ աշխատանք տանելով ,սովորողները կսկսեն ավելի իրատեսորեն արժևորել դպրոցը և այնտեղից ստացվող տարաբնույթ գիտելիքները: Կարող եմ վստահ ասել նաև,որ մեծամասնության մոտ պակասել է սեփական կարողությունների նկատմամբ թերարժեքությունը և իմ կարծիքով այսուհետ կօգտագործեն իրենց պոտենցիալ կարողություններն ու ընդունակությունները ,ավելի բարձր նշաձողեր հաղթահարելու համար,որոնք նախկինում իրենց համար անհաղթահարելի էին:Սովորողները նաև հասկացան, որ ամեն դժվարության հանդիպելիս կարող են հույսները հանգիստ դնել իրեն ավագ ընկերների՝ ուսուցիչների վրա,այլ ոչ թե վախենալ պատժելիության համար:

Ցանկացած աշակերտ, ով հաջողություն է գրանցում, ոգևորվում է, և դա իր պատրաստվածության,դասին ներգրավվածության կարևոր պայմաններից է: Նույնիսկ այն ժամանակ, երբ ուսուցիչը բավարարվում է քիչ առաջադրանք հանձնարարելով տանը, սովորողները ինքներն են պահանջում հանձնարարել լրացուցիչ աշաիատանքներ:

Ծնողների մեծ մասը հասկացան, որ եթե չլիներ իրենց ամեօրյա վերահսկողությունը, ապա չէինք ունենա արդյունքը,որին երկար ենք սպասել:Կային ծնողներ,որ շնորհակալություն են հայտնել իրենց երեխաներին ,,վերադարձնելու,, համար:
Եվ սա մեկ ամսվա հետևողական աշխատանքի արդյունք է:
Աշխատանքների կազմակերպման արագությունը ապահովելու,միմյանց հետ կապ հաստատելու,տվյալներ հավաքագրելու,քննարկումներ անցկացնելու,վերջնական եզրակացություն ձևավորելու համար օգտակար էր ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը,որը հնարավորություն ընձեռնեց հեռավար արագ հաղորդակցմանը:

Իսկ վերջնական հետևությունս այն է,որ ,,որոնողը միշտ կգտնի այն,ինչ փնտրում է,,՝ լինի ուսուցիչ,ծնող,թե երեխա,միայն թե ճիշտ ուղի ընտրի դրան հասնելու համար:

Գրականություն

Սերոբ Խաչատրյան, 2014թ, ,,Կամուրջներ պատերի փոխարեն,, , ,,Անտարես,,

Սերոբ Խաչատրյան,2020 թ, ,,Ուսուցման արդյունավետ հնարներ,, , Երևան,Ֆ.Էբերտ հիմնադրամ ,Հայաստան

Ա.Ս.Մակարենկո, 1953 թ, ,, Գիրք ծնողների համար,, , Երևան, Հայպետհրատ (թարգմանություն)

Խուդոյան Ս., 2004 թ, ,,Անձի զարգացման ճգնաժամային տարիքները,, ,Երևան, Զանգակ-97

Ն.Ի.Բոլդիրև , 1974թ, ,,Դասղեկ,, , Երևան , ,,Լույս,, հրատարակչություն

Մախչանյան Հ. , 1981թ ,,Համագործակցային մանկավարժություն,, , Երևան , ,,Լույս,, հրատարակչություն

Մ.Մելքումյան, 1985թ, ,, Մակարենկոն ընտանեական դաստիարակության մասին ,, , Երևան , ,,Լույս,, հրատարակչություն

Սուխոմլինսկի Վ., 1990թ, ,,Ծնողական սիրո խելացիությունը,, , Մ.